ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16

ք. Արարատ «5» 06 2026թ.

«Արարատի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***«Արարատ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության»*** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **8.940.000 (ութ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[1]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

---

[1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[3]

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով

---

[3] *Եթե Պատվիրատուն հանդիսանում է գանձապետարանում հաշիվ չունեցող պատվիրատու, ապա սույն կետը խմբագրվում է՝«վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու» բառերը փոխարինելով «բանկին վճարման հանձնարարական տալու» բառերով:*

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **10** աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արարատի համայնքապետարան	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 34	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՎՀՀ 04240194	ՀՎՀՀ 08417261
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900422101122	Հ/Հ 220001150832000
Համայնքի ղեկավար Լ.Ավետիսյան	Տնօրեն Դ. Հովսեփյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«5» 06 Հավելված N 1
2026թ. կնքված
ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության						մատուցման	
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Ընդհանուր գումար/ ՀՀ դրամ	Հասցեն	Ժամկետը
1	71241200	***Արարատ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություն***	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն համաձայն Հավելված 1.1-ի	դրամ	1	**8 940 000**	Վարչական տարածք	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.07.2026թ

** Ծառայությունների մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ծառայությունները մատուցել ավելի կարճ ժամկետում*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 34
ՀՎՀՀ 04240194
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900422101122
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՎՀՀ 08417261
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001150832000
Տնօրեն՝ Դ. Հովսեփյան

(ստորագրություն)
Կ.Տ.

«5» 06 Հավելված N 1.1
2026թ. կնքված
ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Արարատ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն

Արարատ քաղաք /3.450 կմ կամ 21 650 քմ /
1.Ցեմենտպագործների փողոց 0.45կմ կամ 2700 քմ /փոսալցում/
2.Շահումյան փողոցի 1.35 կմ կամ 9450,0 քմ /փոսալցում/
3.Զորամասի դիմացի հատված 0.2 կմ կամ 1500.0 քմ
4.Քոթեջներ փողոցը 0.3 կմ կամ 2000.0 քմ
5. Ցեմենտպագործների փ. 1-ին նրբանցք 0.15 կմ կամ 800.0 քմ
6. Ցեմենտպագործների փ. 2-րդ նրբանցք 0.15 կմ կամ 800.0 քմ
7. Ցեմենտպագործների փ. 3-րդ նրբանցք 0.2 կմ կամ 900.0 քմ
8. Շահումյան փողոցի նրբանցք 0.2 կմ կամ 1000.0 քմ
9. Մ.Գորգիսյան փ. նրբանցք 0.15 կմ կամ 1000.0 քմ
10.Թումանյան փողոց 0.15կմ կամ 750 քմ:
11.Շահումյան փողոցի թիվ 39,41 43 շենքերի հարակից տարածք 0.15 կմ կամ 750 քմ ,
Այն իրականացվելու է երկու փուլով՝
2027թ. 1-ին փուլ
1.Ցեմենտպագործների փողոց 0.45կմ կամ 2700 քմ /փոսալցում/
2.Շահումյան փողոցի 1.35 կմ կամ 9450,0 քմ /փոսալցում/
3.Զորամասի դիմացի հատված 0.2 կմ կամ 1500.0 քմ
4.Քոթեջներ փողոցը 0.3 կմ կամ 2000.0 քմ
5.Թումանյան փողոց 0. 15 կմ կամ 750 քմ դրամ
6. Շահումյան փողոցի թիվ 39,41 43 շենքերի հարակից տարածք 0.15 կմ կամ 750 քմ
2028թ.2-րդ փուլ
1.Ցեմենտպագործների փ. 1-ին նրբանցք 0.15 կմ կամ 800.0 քմ
2. Ցեմենտպագործների փ. 2-րդ նրբանցք 0.15 կմ կամ 800.0 քմ
3. Ցեմենտպագործների փ. 3-րդ նրբանցք 0.2 կմ կամ 900.0 քմ
4. Շահումյան փողոցի նրբանցք 0.2 կմ կամ 1000.0 քմ
5. Մ.Գորգիսյան փ. նրբանցք 0.15 կմ կամ 1000.0 քմ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ բնակավայր /0.45 կմ կամ 2700.0 քմ /
Պ. Սևակ փողոցի 3-րդ նրբանցք
Այն իրականացվելու է երկու փուլով
2027թ. 1-ին փուլ 0.225կմ կամ 1350 քմ
2028թ. 2-րդ փուլ 0.225կմ կամ 1350 քմ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ բնակավայր /0,55 կմ կամ 3300.0 քմ /
5-րդ փողոց
Այն իրականացվելու է երկու փուլով
2027թ. 1-ին փուլ 0.15 կմ կամ 750 քմ
2028թ. 2-րդ փուլ 0.4 կմ կամ 2550 քմ

ՎԱՐԴԱՇԱՏ բնակավայր /0.08 կմ կամ 400.0 քմ /
1-ին փողոց՝ 0.08 կմ կամ 400.0 քմ

ԱՎՇԱՐ բնակավայր /2.38 կմ կամ 16 660.0 քմ /
1.Ֆիդայի փողոցը 0.19 կմ կամ 1330.0 քմ
2. Ն.Գրիգորյան՝փողոցը 0.28 կմ կամ 1960.0 քմ
3.Մանուկ Զաքարյան փողոց 0.34 կմ կամ 2380.0քմ
4.Գ.Նժդեհ փ. նրբանցք 0.09 կմ կամ 630.0 քմ
5.Անդրանիկի փողոցը 0.78 կմ կամ 5460.0 քմ
6.Շիրվանզադեի փողոց 0.7 կմ կամ 4900.0 քմ
Այն իրականացվելու է երկու փուլով
2027թ. 1-ին փուլ
1.Ֆիդայի փողոցը 0.19 կմ կամ 1330.0 քմ

2. Ն.Գրիգորյան՝փողոցը 0.28 կմ կամ 1960.0 քմ
3.Մանուկ Հաքարյան փողոց 0.34 կմ կամ 2380.0քմ
4.Գ.Նժդեհ փ. նրբանցք 0.09 կմ կամ 630.0 քմ :
Ընդամենը՝ 0.9 կմ կամ 6300.0 քմ

2028թ. 2-րդ փուլ

1.Անդրանիկի փողոցը 0.78 կմ կամ 5460.0 քմ
2.Շիրվանզադեի փողոց 0.7 կմ կամ 4900.0 քմ:
Ընդամենը՝ 1.48կմ կամ 10 360 քմ

ՆՈՅԱԿԵՐՏ բնակավայր /1.3 կմ կամ 9100.0 քմ/

1.Գ.Նժդեհի փողոց 0.45 կմ կամ 3150.0 քմ
2.Չարենցի փողոց 0.15 կմ կամ 1050.0 քմ
3. Բարեկամության փողոց 0.7 կմ կամ 4900.0 քմ:
Այն իրականացվելու է 2 փուլով՝

2027թ-ին 1-ի փուլ

1.Գ. Նժդեհի փողոց 0.45 կմ կամ 3150.0 քմ

2028թ-ին 2-րդ փուլ

1. 2.Չարենցի փողոց 0.15 կմ կամ 1050.0 քմ
2. Բարեկամության փողոց 0.7 կմ կամ 4900.0 քմ:
Ընդամենը 0.85 կմ կամ 5950.0 քմ

ԱՐԱՐԱՏ բնակավայր /3.845 կմ կամ 24 450 քմ/

1.Թումանյան փողոց /Սահմանապահների փողոցի հեպ հատումից մինչև Չարենցի փողոցի հեպ հատումը/ 0.455 կմ կամ 2730.0 քմ
2.Խնկո Ապեր փողոց /Սահմանապահների փողոցի հեպ հատումից մինչև Մ.Մելքոնյան փողոցի հեպ հատումը/ 0.6 կմ կամ 3600.0 քմ
3.Կ.Փանոսյան փողոց /Հակոբյան փողոցի սկզբնամասից մինչև Ռաֆֆու փողոցի հեպ հատումը և փոքր շարունակություն/ 0.7 կմ կամ 4200.0 քմ
4.Ռաֆֆու փողոց /Սահմանապահների փողոցի հեպ հատումից մինչև Տերյան փողոցի հեպ հատումը/ 0.34 կմ կամ 2040.0 քմ
5.Չարենցի փողոց /Ամբողջությամբ, Թումանյան փողոցի հեպ հատումից մինչև Մ.Մելքոնյան փողոցի հեպ հատումը 0.61 կմ կամ 3660.0 քմ
6.Հորավար Անդրանիկի փողոց 0.46 կմ կամ 2760.0 քմ
7.Գերեզմաններ տանող ճանապարհ 0.7 կմ կամ 3500.0 քմ
8. Շիրվանզադեի փողոց 0.28 կմ կամ 1960.0 քմ
Այն իրականացվելու է 2 փուլով

2027թ 1-ին փուլ

1. Հորավար Անդրանիկի փողոց 0.46 կմ կամ 2760.0 քմ
2.Գերեզմաններ տանող ճանապարհ 0.7 կմ կամ 3500.0 քմ
3. Շիրվանզադեի փողոց 0.28 կմ կամ 1960.0 քմ
Ընդամենը 1-ին փուլ՝ 1.44 կմ կամ 8220.0 քմ

2028թ 2-րդ փուլ

1.Թումանյան փողոց /Սահմանապահների փողոցի հեպ հատումից մինչև Չարենցի փողոցի հեպ հատումը/ 0.455 կմ կամ 2730.0 քմ
2.Խնկո Ապեր փողոց /Սահմանապահների փողոցի հեպ հատումից մինչև Մ.Մելքոնյան փողոցի հեպ հատումը/ 0.6 կմ կամ 3600.0 քմ
3.Կ.Փանոսյան փողոց /Հակոբյան փողոցի սկզբնամասից մինչև Ռաֆֆու փողոցի հեպ հատումը և փոքր շարունակություն/ 0.7 կմ կամ 4200.0 քմ
4.Ռաֆֆու փողոց /Սահմանապահների փողոցի հեպ հատումից մինչև Տերյան փողոցի հեպ հատումը/ 0.34 կմ կամ 2040.0 քմ
5.Չարենցի փողոց /Ամբողջությամբ, Թումանյան փողոցի հեպ հատումից մինչև Մ.Մելքոնյան փողոցի հեպ հատումը / 0.61 կմ կամ 3660.0 ք մ
Ընդամենը 2-րդ փուլ՝ 2.705 կմ կամ 16 230 քմ

ԱՐՄԱՇ բնակավայր /1.0 կմ կամ 7000.0 քմ /

1.Մ.Նիկողոսյան փողոց 0.3 կմ կամ 2100.0 քմ
2.Վ.Սարգսյան փողոց 0.7 կմ կամ 4900.0 քմ
Այն իրականացվելու է 2 փուլով՝

2027թ-ին 1-ի փուլ

1.Մ.Նիկողոսյան փողոց 0.3 կմ կամ 2100.0 քմ
2028թ-ին 2-րդ փուլ
1.Վ.Սարգսյան փողոց 0.7 կմ կամ 4900.0 քմ

Սուրենավան բնակավայր /1.48 կմ կամ 8880.0 քմ/
1.Բարեկամության փողոց 0.41 կմ կամ 2460.0 քմ
2.Աբովյան փողոց 0.4 կմ կամ 2400.0 քմ
3.Արցախի փողոց 0.4 կմ կամ 2400.0 քմ
4.Արցախի փողոցի զուգահեռ միջշենքային փողոց 0.27 կմ կամ 1620.0 քմ
Այն իրականացվելու է 2 փուլով՝
2027թ-ին 1-ի փուլ
1.Արցախի փողոց 0.4 կմ կամ 2400.0 քմ
2.Արցախի փողոցի զուգահեռ միջշենքային փողոց 0.27 կմ կամ 1620.0 քմ,
Ընդամենը 1-ին փուլ 0.67 կմ կամ 4020.0քմ
2028թ 2-րդ փուլ
1.Բարեկամության փողոց 0.41 կմ կամ 2460.0 քմ
2.Աբովյան փողոց 0.4 կմ կամ 2400.0 քմ
Ընդամենը 2-րդ փուլ 0.81 կմ կամ 4860.0քմ

ՈՒՐՑԱԼԱՆՋ բնակավայր / 14 .84 կմ կամ 94 320.0 քմ/
1.Անդրանիկի փողոցը 0.155 կմ կամ 930.0 քմ
Այն իրականացվելու է 2 փուլով՝
2027թ 1-ին փուլ *6.82 կմ կամ 43 620.0 քմ դրամ*
2028թ 2-րդ փուլ *8.02 կմ կամ 50 700.0 քմ*

1. Հին ասֆալտի քանդում էքսկավատրով և բարձում
2. Տեղափոխում/ըստ տեղեկանքի/
3. Աշխատանքներ թափոնատեղում
4. Տարածքի համահարթեցում մեխանիզմների միջոցով
5. Խճի նախապատրաստական շերտի անցկացում 15 սմ բիտումի տարածումով
6.Ասֆալտապատման ծածկ՝ 5 սմ հաստությամբ՝ մանրահատիկ ասֆալտբետոնից
7 Մայթերի վերանորոգում, ծածկույթի փոխում
8. Եզրաքարերի փոխում (բազալտե եզրաքարեր)
Ուշադրություն՝ վերը նշված պարամետրերը նախնական են և նախագծման աշխատանքների ժամանակ կարող են փոփոխվել ըստ անհրաժեշտության
Ընդհանուր դրույթներ
• Յուրաքանչյուր ճանապարհահատվածի համար նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն, իսկ ծավալաթերթերը նաև ռուսերեն լեզուներով՝ 3 թղթային օրինակով և մեկ էլեկտրոնային տարբերակով (PDF ֆորմատներով, ծավալաթերթերը ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով):
• Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:
• ***Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ըստ առանձին բնակավայրերի և առանձին փուլերի /տարիների/:***
Հիմնական պարտականություններ և պահանջներ՝
*Ինժեներական հետազննման իրականացում:
*Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում:
• Ճանապարհի ծրագրիսահմաններում գտնվող ստորգետնյա և վերգետնյա ինժեներական բոլոր գծերի ուսումնասիրություն, անհրաժեշտ տեխնիկական պայմանների ձեռք բերում և ճանապարհի ծրագծի իրականացմանը խոչընդոտելու, իսկ ստորգետնյա գծերի դեպքում նաև ոչ բարվոք վիճակում գտնվելու դեպքում այդ գծերի համար տալ նախագծային լուծում: Ինժեներական գծերի (նաև սարքավորումների) տեղափոխման անհրաժեշտության դեպքում դրանց տեղափոխման նախագծի մշակում և իրավասու կազմակերպությունների հետ համաձայնեցում:
• Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ, հիմնանորոգվող տեղամասը հանձնման-ընդունման ակտի միջոցով կապալառու կազմակերպությանը հանձնում՝ տեղանքին ամրակցող՝ նշաններով և բարձրությունների հենանիշերով:
Հետազննման վերաբերյալ պահանջներ
• Ինժեներական հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու և նախագծային լուծումները հիմնավորելու անհրաժեշտ ծավալով,

• Հետազոտման ընթացքում վերանորոգվող, վերակառուցվող, հիմնանորոգվող ճանապարհի երկայնքով **առնվազն յուրաքանչյուր 330 մետր տեղամասում, (իսկ նստվածքային տեղամասերում պարտադիր՝ առնվազն 2մ խորությամբ)** կատարել հորատումներ՝ճանապարհային պատվածքի շերտի հաստության, պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների ուսումնասիրման անհրաժեշտ խորությամբ և վիճակի գնահատում:
• Հետազոտման ընթացքում իրականացնել հիմնանորոգվող տեղամասի առկա վիճակի տեսանկարահանում:

Նախագծերի նկատմամբ պահանջներ

• Նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:
• Նախագծերի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝
✓Հողային պաստառի վերականգնում /վերակառուցում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),
✓Հենապատերի վերականգնում /վերակառուցում/ նորոգում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),
✓Ճանապարհային պատվածքի վերականգնում /վերակառուցում/ (ըստ անհրաժեշտության),
✓Մայթերի վերանորոգում /վերակառուցում/ նորոգում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),
✓Ջրահեռացման համակարգի վերանորոգում /վերակառուցում/ նորոգում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),
✓Արհեստական կառուցվածքների վերականգնում /վերակառուցում/ նորոգում/ կառուցում (ըստ անհրաժեշտության),
✓Ճանապարհի կահավորում
✓Անվտանգության տարրերի, ինչպես նաև սև կետերի շտկման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

Նախագծերի կազմի նկատմամբ պահանջներ՝

• Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝
✓Բացատրագիր (որն իր մեջ կներառի վերանորոգվող, վերակառուցվող, հիմնանորոգվող տեղամասի վիճակի, հետազոտման արդյունքների՝ այդ թվում նաև գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտի հաստության, գոյություն ունեցող ճանապարհային պատվածքի շերտերի նյութերի կազմվածքի, հիմնատակի գրունտների վիճակի հետազոտությունների և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ, անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների քանակը, տարածաշրջանի քարտոզ՝ նշելով այն հատվածը, որտեղ իրականացվելու են շինարարական աշխատանքներ, նախատեսվող աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենա-մեխանիզմների և ինժեներատեխնիկական մասնագիտական խբի կազմերը),
✓Ինժեներաերկրաբանական եզրակացություն (որն իր մեջ կներառի տեղեկատվություն՝ կլիմայի, ռելյեֆի, շրջանի սեյսմիկ և բնահողերի սեյսմիկ հատկությունների, բնահողերի տեսակները ըստ փխրեցման կարգի, ջրաբանությունը և ջրաերկրաբանությունը, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցված պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, օգտագործվող հանքանյութերի հանքերի տեղերի վերաբերյալ),
✓Գծագրեր (որոնք կներառեն՝ տախեոմետրական հանույթի հատակագիծը, այդ թվում՝ հենանիշերը իրենց կոորդինատներով, ճանապարհի երկայնական կտրվածքը, լայնական կտրվածքներ՝ յուրաքանչյուրը 20մ հեռավորության վրա, սակայն հաշվի առնելով տեղանքի իրադրությունը նշված հեռավորությունը կարող է փոփոխվել, կահավորման և ջրահեռացման հատակագիծը, ճանապարհային պատվածքի կոնստրուկցիայի գծագրեր՝ բոլոր տիպերի համար կախված հարակիցտարրերից),
✓Նախատեսվող արհեստական կառուցվածքների գծագրեր (որոնք կներառեն ծավալների մասնագրերը),
✓Տիպային գծագրեր (որոնք կներառեն՝ նախագծում ընդգրկվող կառուցվածքների, նախատեսվող աշխատանքների և երթևեկության կազմակերպման սխեմաներ, այդ թվում՝ շինարարության ընթացքում աշխատանքային տեղամասերը լուսաազդանշանային առկայծողլապտերներով կահավորելու սխեման և այլն),
✓Ամփոփագրեր (որոնք կներառեն հողային աշխատանքների՝ ըստգրունտների կարգի, դրանց մշակման, տեղափոխման մեխանիզմների աշխատանքի տեսակի, երթևեկելի մասի նորոգման՝ ըստ ծածկի կոնստրուկտիվ առանձին շերտերի և աշխատանքի տեսակի, կամրջիկոնստրուկտիվ տարրերի նորոգման՝ ըստ աշխատանքի տեսակի, կահավորման և անվտանգության տարրերի՝ ըստ աշխատանքի տեսակի, արհեստական կառուցվածքների՝ ըստ աշխատանքի տեսակի ամփոփագրեր),
✓Համահավաք ամփոփագրեր,
✓Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլործախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%),
✓Նախահաշիվ (որն իր մեջ կներառի ամփոփ, օբյեկտային և տեղային նախահաշիվներ):

Համաձայնեցումներ

• Նախագծային փաստաթղթերը համաձայնեցնել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ,

• Համայնքների վարչական սահմաններում առաջարկվող նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ,
• տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ համաձայնեցնել պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերը,
• կոմունիկացիաների (ջրագծի, գազատարի, կապի մալուխի և այլն) տեղափոխում նախատեսելու դեպքում նախագիծը համաձայնեցնել իրավասու շահագրգիռ մարմինների հետ:

Նորմատիվային պահանջներ

• Ինժեներական հետազննումն իրականացնել ՀՀՇՆ 1-2.01-99 շինարարական նորմերով և ГОСТ 32836-2014-ի, ГОСТ 33179-2014-ի ստանդարտներով սահմանված պահանջների համաձայն:
• Ինժեներաերկրաբանական հետազննումն իրականացնել ГОСТ 32868-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:
• Տեղագրագեոդեզիական հետազննումն իրականացնել ГОСТ 32869-2014-ի ստանդարտով սահմանված պահանջների և ՀՀ-ում գործող այլ գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերի համաձայն:
• Նախագծային փաստաթղթերը մշակել ՀՀՇՆ IV-11.05.02-99, ՇՆուԿ 2.05.03-84 «Կամուրջներ և խողովակներ» շինարարական նորմերով, ՄՄ ՏԿ 014-2011 մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն:
• ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցներով սահմանված պահանջների համաձայն:
• Ճանապարհի կահավորումն իրականացնել ՀՀ կառավարության 10.01.2008թ-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:
• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:
Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ГОСТ 21.701-2013, ГОСТ 21.101.97, ГОСТ 21.501-93 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ ներմատիվային փաստաթղթերի համաձայն:
Ծառայության դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացությունը ստանալուց հետո:

Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	**ավարտը**
Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից	15/07/2026թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 34
ՀՎՀՀ 04240194
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900422101122
Համայնքի ղեկավար՝ Ա. Եվդոկիմյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՎՀՀ 08417261
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001150832000
Տնօրեն՝ Ղ. Հովսեփյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 5 » 06 2026թ. կնքված
ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200	***Արարատ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայություն***								1788000	1788000	1788000	1788000	1788000	**1788000**
			Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2027թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
				7152000	7152000	7152000	7152000	7152000	7152000	7152000	7152000	7152000	7152000	7152000	**7152000**

Ուշադրություն՝ *Ծառայության դիմաց վճարումը կիրականացվի փորձաքննության դրական եզրակացությունից հետո*

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
** *հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արարատի համայնքապետարան	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 34	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՎՀՀ 04240194	ՀՎՀՀ 08417261
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900422101122	Հ/Հ 220001150832000
Համայնքի ղեկավար՝ Ա. Սվինտիկյան	Տնօրեն՝ Դ. Հովսեփյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3
« » 2026թ. կնքված
ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2026թ. կնքված
ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ N «ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Արարատ

«5» 06 2026թ.

«Արարատի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Ասլան Ավետիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից հիմք ընդունելով **N «ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/16»** գնման պայմանագրի 7.5 և 7.15 կետերը /այսուհետև Պայմանագիր/, կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետև Հանաձայնագիր/ հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով և համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 և N1.1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ***«Արարատ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության»*** (այսուհետ՝ ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված ծառայությունը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված ծառայությունը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան:

1.4 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև շինարարական աշխատանքների ավարտը:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն համաձայնագրով պատվիրատուի կողմից վճարման ենթակա գումարը կազմում է **1.788.000 (մեկ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2. Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N2 հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 2 հավելվածը հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արարատի համայնքապետարան	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 34	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՎՀՀ 04240194	ՀՎՀՀ 08417261
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 900422101122	Հ/Հ 220001150832000
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան	Տնօրեն Դ. Հովսեփյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N2
«5» «06» » 2026թ. կնքված
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71241200	**Արարատ համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայություն**	%	%	%	%	%	%	%	1788000	1788000	1788000	1788000	1788000	**1788000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արարատի համայնքապետարան
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 34
ՀՎՀՀ 04240194
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900422101122
Համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ՀՎՀՀ 08417261
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001150832000
Տնօրեն՝ Դ. Հովսեփյան

(ստորագրություն)
Կ.Տ.